Հակամարտության պատմահիրավական ու քաղաքական այնպիսի կերպարի ներդրումը միջազգային հանրային գիտակցության մեջ, որը կհամապատասխանի նրա իրական բնույթին, այսօր այն գերխնդիրն է, որ ծառացած է ողջ հայության ու արդարության ու ճշմարտության իդեալներին հավատարիմ գիտական շրջանակների առջև:

ՀՏԴ 327(479.25+479.243) *Քաղաքագիտություն*

Արման Նավասարդյան
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային քաղաքականության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ,
արտակարգ և լիազոր դեսպան

ՀՀ և ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորը գլոբալիզացիայի և ինտեգրացիայի պայմաններում ՀՀ և ԼՂՀ դիվանագիտությունը կարող է զարգանալ դասական դիվանագիտության հարուստ փորձի վրա, որի մեջ հատուկ տեղ են գրավում մաքիավելիզմը և չինական ստրատագեմաները:

Դրա հետ մեկտեղ XXI դարում մեծապես փոխվում է դիվանագիտության առանձնահատկությունները: Դասական դիվանագիտության կողքին հայտնվում է ժողովրդական դիվանագիտությունը, որի բազմաթիվ բաղադրիչները անվանվում են «փափուկ ուժ»:

ՀՀ և ԼՂՀ-ի դիվանագիտական զինանոցում առկա են «փափուկ ուժի» դիվանագիտության բազմաթիվ սեգմենտներ, որոնց ճիշտ և հմուտ օգտագործումը «խելացի» և «կոշտ» ուժերի համադրումով կարող են կարևոր նշանակություն ունենալ նրանց ներքին և արտաքին խնդիրների հաջող լուծման համար, նպաստել իրենց օգտին դարաբաղյան խնդրի կարգավորմանմ գործընթացին:

Հայկական երկու պետությունների դիվանագիտական ծառայությունները պետք է օգտվեն դիվանագիտական արվեստի այնպիսի փորձված միջոցներից, ինչպիսիք են «մաքոքային դիվանագիտությունը», պետությունների միջև միջնորդային դերակատորությունը, հակառակորդի ճամբարում գոյություն ունեցող հակասությունների վրա խաղալը և այլն:

Բանալի բառեր՝ Խաղաղությունն այլընտրանք չունի, մաքիավելիզմ, չինական ստրատագեմա, ժողովրդական դիվանագիտություն, «փափուկ ուժ», «խելացի ուժ», «կատալիզատորային դիվանագիտություն», «մաքոքային դիվանագիտություն», ազգային փոքրամասնության «պարտադրված անջատում»:

Арман Навасардян
Зав. кафедры международных отношений

ДИПЛОМАТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРМЕНИИ И НКР В СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ

В условиях глобализации и интеграции дипломатия Республики Армения и Нагорно-Карабахской Республики может развиваться на основе богатого опыта классической дипломатии, где особое место занимают макиавеллизм и китайские стратагемы.

Вместе с тем в XXI веке особенности дипломатии во многом меняются. Рядом с классической дипломатией появляется народная, многочисленные компоненты которой именуют «мягкой силой».

В дипломатическом арсенале РА и НКР – масса сегментов дипломатии «мягкой силы», умелое и грамотное использование которых в синтезе с «разумной» и «жесткой» силой может сыграть важную роль в решении внутренних и внешних проблем, способствовать урегулированию карабахской проблемы в их пользу.

Дипломатические службы обоих армянских государств должны пользоваться также такими испытанными средствами дипломатического искусства, как «челночная дипломатия», посредничество между государствами, игра на противоречиях, существующих в стане противника и т.д.

Ключевые слова - Миру нет альтернативы, макиавеллизм, китайская стратагема, народная дипломатия, «мягкая сила», «разумная сила», «катализаторная дипломатия», «челночная дипломатия», «вынужденное отделение» национального меньшинства.

Arman Navasardyan,
Head of Department of International Politics
and International Relations
Russian-Armenian (Slavonic) University

ARMENIAN AND NKR PROBLEMS OF FOREIGN POLICY AND DIPLOMACY IN PRESENT INTERNATOINAL RELATIONS

Under the circumstances of deep globalization and integration the diplomacy of RA and NKR can be developed on the basis of the rich experience of classic diplomacy in which Machiavellianism and Chinese stratagems have their special role.

Together with that the diplomatic peculiarities greatly change in the XXI century. Peoples' diplomacy appears next to classic diplomacy, many parts of which are called "soft power".

There are many segments of soft power in the diplomatic arsenal of RA and NKR which may have a great importance for the successful solution of their internal and external problems, if used in a right and skillful manner by juxtaposing smart and strong powers and it can foster the process of Nagorno-Karabakh conflict regulation.

The diplomatic service of two Armenian states should apply such proved diplomatic means as shuttle diplomacy, role of mediators between the countries and taking advantage of the contradictions inside the adversary's side.

Keywords: There is no alternative to peace; machiavellanism; Chinese stratagem, peoples' diplomacy, soft power, smart power, catalytic diplomacy, shuttle diplomacy, national minority, forced division

Ապրիլյան արյունալի դեպքերից հետո Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման շուրջ ուրվագծվում է որակապես փոփոխվածիրավիճակ, որը Հայաստանի և Ղարաբաղի արտաքին քաղաքականության գերատեսչությունների առաջ դնում էդիվանագիտական նոր խնդիրների յուրացման և իրականացման հրամայականը: Պատմությունը երբեմն սիրում է զուգահեռներ անցկացնել վաղ անցյալի և ներկայի անցքերի միջև: Երեսնամյա դաժան պատերազմներից հետո1648 թ. կնքվեց հաշտության պայմանագիր, որով «վերջդրվեց Երեսնամյա պատերազմին ու սկիզբ դրվեց ժամանակակից եվրոպականան կախպետությունների գոյությանը»: *(http://wol.jw.org/hy/wol/d/r44/lp-rea/2004205):* Տեղի ունեցավ Եվրոպական քաղաքական քարտեզի ձևավորում, ինչպես նաև պետությունների, այդ թվում փոքր պետությունների հայեցակարգի ձևավորում: Արդյո՞ք քառորդ դար մխացող կոնֆլիկտից հետո Երևանը և Բաքուն նույնպես կգան հիմնահարցի արդարացի հանգուցալուծման և կհաստատվի՞ տարածաշրջանում խաղաղություն:

Անտիկ աշխարհի, միջնադարի և նոր շրջանի մեծ մտածողները դիվանագիտությունը սերտորեն պայմանավորում են այն աքսիոմատիկ ճշմարտության հետ, որ խաղաղությունն այլընտրանք չունի: Հոլանդացի նշանավոր հումանիստ Էրազմ Ռոտերդամացին, օրինակ՝ շարունակելով հռոմեացի Սենեկայի ավանդույթները, գտնում է որ պատերազմը խելացնորություն է, կործանաբեր մարդկության համար, բոլոր դժբախտությունների և չարիքի պատճառը: Նա ժտում է պատերազմը և խաղաղության գաղափարը լրացնում Աստվածաշնչի պոստուլատներով *(Ти́и, Summa, Геополитика, антология, Академический проект, Культура, Москва, 2006, ст. 91).*

Պատմության զարգացման բերումով հայկական դիվանագիտությունը չունի այն փորձը և անվանդույթները, որոնց տիրապետում են այլ՝ պետականություն ունեցած երկրները: Այդուհանդերձ, և՛ Հայաստանը, և՛ Արցախը ներկա խորը գլոբալիզացիայի և աշխույժ ինտեգրացիայի պայմաններումի զորու են զարգացնելու իրենց դիվանագիտական արվեստը՝ հենվելով դասական դիվանագիտության և նրա զարգացման հնարավորությունների վրա: Իսկ շահում են այն պետությունները, որոնք լավ են սերտում անցյալի դասերը: Դրանց մեջ հատուկ տեղ է գրավում «Մաքեվիալիզմը», որի նկատմամբ հինգ հարյուր տարուց ավել չեն նվազում հետաքրքությունը,բանավեճերը, քննադատությունը կամ դրվատանքը: Այդ ուսումքի հիմնադիր Նիկոլո Մաքիավելիի «Տիրակալը» տրակտատը քաղաքագիտական ժանրի գլուխգործոց է պետական կառավարման, պետության ղեկավարի դերի, նրա ռազմավարության և մարտավարության արվեստի մասին: Հեղինակըներկայացնումէքաղաքականությանփիլիսոփայությանաշխարհականտարբերակը՝ կյանքիփորձընպատկերականությունըգերադասելովայնվերացականխորհրդածությունից»: *(LAROUSSE, Всемирная Иллюстрированная Энциклопедия, Изд. АСТ. Астрель , М. 2010, ст. 922):* «Տիրակալը» եղել է Մարքսի, Էնգելսի, Ստալինի սեղանի գիրքը, իսկ «ՆապոլեոնԲոնապարտնանհրաժեշտությանդեպքումպետությանբարձրագույնհետաքրքրություններն իրագործելիս առաջնորդվել է Մաքիավելիիսկզբունքներով»: *(Henry Kissinger DIPLOMASCY, N.Y.,1994, p. 111):* Նախ, Մաքիավելին փորձում է զգուշացնել մարդկությանը, թե ինչ վտանգներ են դարանակալում թույլ պետություններին՝ հետապնդելով մի նվիրական նպատակ՝ ամրապնդել պետության հիմքերը, պաշտպանել նրա ազգային շահերը: «Սխալվում են նրանք, ովքեր դիվանագիտական պրոֆեսիան տեսնում են ինտրիգի մեջ»,- ասում է նա: *(Цит. поПопову В.И., Современная дипломатия, Теория и практика, Изд. Международные отношения, М., 2004, с. 315):* Մաքիավելիի ընդդիմախոսներն առաջին հերթին դատափետում են նրա հետևյալ պոստուլատ. «…բոլոր գազաններից տիրակալը թող նմանվի երկուսին առյուծին և աղվեսին: Առյուծը վախենում է թակարդներից, իսկ աղվեսը՝ գայլերից, ուրեմն պետք է աղվեսին նմանվել, որպեսզի կարողանաս թակարդները շրջանցել և առյուծին, որպեսզի գայլերին վախեցնես»: *(Մաքիավելի Նիկոլո, Տիրակալը, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2010 թիվ, էջ 123):*Մեր կարծիքով, այս պարադիգմը կարելի է կիրառել դիվանագիտական հարաբերություններում, հատկապես, փոքր երկրների կողմից՝ նրանց արտաքին քաղաքականության մեջ: Հետաքրքիր է Մաքիավելլի դիտողությունը մեծ և փոքր երկրների փոխհարաբերությունների վերաբերյալ: Խոսելով հռոմեացիների նվաճողական քաղաքանության մասին, Մաքիավելին նշում է, որ նրանք «հիմնում էին գաղութներ, հովանավորում թույլերին՝ այդուհանդերձ, նրանց թույլ չտալով ուժեղանալ, սանձում էին ուժեղներին ու միջոցներ ձեռք առնում, որ երկիր չթափանցի հզոր օտարերկրացիների ազդեցությունը»: *(Նույն տեղում, էջ 16):*Քաղաքական նման երևութի մենք ականատես ենք լինում մեր օրերում ևս, խոշոր պետությունների կողմից փոքր երկների նկատմամբ՝ նրանց անցյալ կամ ներկա հարաբերություններում:

Հայ դիվանագիտական մտքի զարգացման, ինչպես նաև գործնական առումով պակաս կարևոր նշանակություն չունի չինական դիվանագիտության ուսումնասիրությունը և փոխառումը, մասնավորապես, չինական ռազմավարական մտքի արգասիք հանդիսացող յուրահատուկ «դիվանագիտական ստրատագեմաները»: Ստրատագեման գործողության ալգորիթմ է քաղաքական, դիվանագիտական, ռազմական, տնտեսական և անձնական նպատակներին հասնելու համար: Չինական ստրատագեմային մոդելը հիմնված է ինտելեկտուալ որոգայթների և պարադոքսալ, ոչ սովորական տակտիկական կոմբինացիաների վրա, որոնք խաղարկվում են գլխավորապես դիվանագիտական բանակցությունների ժամանակ: «Ստրատագեմիզմը դարձավ ազգային բնավորության հոգեկերտվածք, ազգային հոգեբանության առանձնահատկություն: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ չինացիները ճարպիկ ինտրիգաններ են, խորամանկ խաբեբաներ: Ամենևին: Դա մի ժողովուրդ է, որն առաջին հերթին ունի ռազմավարական մտածողություն, կազմում է երկարաժամկետ պլաններ՝ ինչպես պետական, այնպես էլ անձնական մակարդակով, կարողանում է հաշվարկել իրադրությունը շատ քայլեր առաջ և օգտագործում է ռազմավարական որոգայթներ՝ հաջողության հասնելու նպատակով»: *(Мясников В.С. Антология хитроумных планов, предисловиекниге Харро фон Зенгера Стратагемы, т. 1, М. Изд. ЭКСМО, 2004, с. 10).* Ստրատագեման հիշատակվում է Սուն-ցզիի (Ք.ա. 551-479) ռազմական արվեստի վերաբերյալ տրակտատում, որն աշխարհի ամենահին ձեռագիրն է, իսկ հեղինակը Կոնֆուցիի հասակակիցն է: Անտիկ դարերում ստեղծված 36 ստրատագեմաներն այսօր էլ չեն կորցրել իրենց քաղաքական արժեքը և լայնորեն կիրառվում են, ինչպես մեծ և միջին, այնպես էլ փոքր պետությունների դիվանագիտական պրակտիկայում:

Փոքր երկրների կարգավիճակը պայմանավորված է նրանց ներուժի՝ ռեզերվի (ռազմական, ֆինանսա-տնտեսական, արդյունաբերական և այլն) թուլությամբ՝ հետևաբար անվտանգության խոցելիությամբ: Ելնելով այս իրողությունից փոքր պետությունները միշտ ձգտել են հավասարակշռել ուժեղ երկրների միջև և պահպանել չեզոքություն (Ավստրիա, Շվեյցարիա, Շվեդիա և ուրիշներ) կամ ապահովել նրանց հովանավորությունը (Իսրայել): Սակայն, երբ ասում ենք, որ փոքր պետությունները զրկված են ներուժից, մոռանում ենք, որ նրանց ամենակարևոր ներուժը դիվանագիտությունն է: Եվ եթե երկիրն ունի բարձրակարգ դիվանագիտական ծառայություն, ապա նա ակտիվորեն մասնակցում է միջազգային հարաբերություններին, միջազգային իրավունքի նորմերի ինստիտուցիոնալիզացման և միջազգային կազմակերպությունների ու կոլեկտիվ անվտանգության համակարգերի ստեղծման գործընթացին: Դա մի կողմից ապահովում է փոքր պետության ինտեգրացիան միջազգային տնտեսական և քաղաքական կառույցներում, մյուս կողմից՝ նպաստում է սեփական խնդիրների լուծման գործին: Այս պարադիգմը կարևորվում է Հայաստանի և Արցախի դիվանագիտության զարգացման համար:

XXI դարի դիվանագիտության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նկատելիորեն փոխվում է նրա մեթոդաբանությունը, գործելու մեթոդները, ձևերն ու միջոցները: Դա պայմանավորված է նրանով, որ գլոբալիզացիայի պայմաններում անհետանում է ներքին և արտաքին քաղաքականության սահմանը, որի հետևանքով դասական, այսինքն պետական դիվանագիտության կողքին հայտնվում է դիվանագիտական բոլորովին նոր տարատեսակ: Այն կոչվում է ժողովրդական (public doplomacy) և կրում է մի շարք այլ անուններ՝ քաղաքացիական (citizen), հասարակական, հանրային, մեգաֆոնային: (Ժողովրդական դիվանագիտություն եզրը խորհրդային ռուդիմենտ է: Ներկայումս ռուսական քաղաքագիտության մեջ ևս, ամերիկյանի օրինակով, ավելի շատ օգտագործվում է «քաղաքացիական դիվանագիտություն» եզրը):

Եթե դասական դիվանագիտությունն ունի իր բաղադրիչները՝ արտգործնախարարություն, դեսպանություններ, հյուպատոսական հիմնարկներ և միջազգային կազմակերպություններ իրենց աշխատակազմով հանդերձ, որոնք հանդիսանում են պետական ծառայողներ, ժողովրդական դիվանագիտությունն իրենից ներկայացնում է այսպես կոչված, խաղացողների (ակտորների) գրեթե անսահմանափակ սպեկտր՝ տրանսնացիոնալ կազմակերպություններ, ոչկառավարական կազմակերպություններ (NGO), եկեղեցի, գիտահետազոտական կրթական հիմնարկներ արվեստի միություններ, լրատվամիջոցներ և այլն: Այս ամենը ստացել է պայմանական անուն «փափուկ ուժ»:

«Փափուկ ուժը» լայնորեն պրոպագանդել է ամերիկյան հայտնի քաղաքական գործիչ Ուիլյամ Ֆուլբրայտը, որի կարծիքով «փափուկ ուժը» ռազմական ուժից ավելի համոզիչ է նախընտրելի: Սակայն «փափուկ ուժի» տեսության հեղինակ է համարվում Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը, որը պետության ներուժը բաժանում է երկու կատեգորիայի «փափուկ» և « կոշտ» ուժի: Ի դեպ՝ այս տեսության զարգացման և մասայականացման գործում իր պատկառելի ավանդն ունի հայ անվանի դիվանագետ Էդուարդ Ջերեջյանը: «Փափուկ ուժը» կազմված է պետության երեք գործոններից ա/ մշակույթից, բ/ քաղաքական գաղափարախոսությունից և հասարակական-քաղաքական արժեքներից, գ/ արտաքին քաղաքականությունից: *Տես. Nye J. Soft power: The Means to Success in World Politics. N.Y. Public Affairs Group, 2004 (изд. на рус. Най Дж. «Гибкая сила. Как добиться успеха в мировой политике». М.: Тренд, 2006).*

Մենք համաձայն ենք այն հեղինակների հետ, որոնք «փափուկ ուժը» համարում են պետության ներքին և արտաքին քաղաքական գործոնների ամբողջականությունը: «Փափուկ ուժի» հնարավորություններն առանձին հետաքրքրություն են ներկայացնում փոքր երկրների համար, որոնց հմուտ օգտագործումը կարող է նպաստել ներքին և արտաքին խնդիրների լուծմանը:«Փափուկ ուժի» սեգմենտներ կարելի է համարել ժողովրդական դիվանագիտությունը (public diplomacy),ինֆորմացիոն հոսքերը, քաղաքական փիառը՝ ուղղորդված դեպի օտարերկրյա լսարան,գլոբալ մարքետինգը, զ/ զբոսաշրջությունը, սպորտնու մշակութային փոխանակումը, է/ ինֆորմացիոն պատերազմներ վարելու միջոցները,թ/ միգրացիոն քաղաքականությունը, ժ/ սփյուռքը: *(См. Леонова Ольга Мягкая сила --**ресурс внешней политики государства**www.observer.materik.ru/observer/N4_2013/027_040.pdf).*

Արցախի դիվանագիտական զինանոցում հիմնականում առկա են ժողովրդական դիվանագիտության նշված միջոցները՝ «փափուկ ուժի»գրեթե բոլոր հնարավորություններով հանդերձ: Բացի այդ, քանի դեռ Արցախը չի ճանաչվել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և ունի սահմանափակ հնարավորություններ, Ստեփանակերտը կարող է օգտվել այն պրակտիկայից, որն ստացել է «զեղչված դիվանագիտություն» («cut-price diplomacy») անվանումը, ինչը «մատչելի է» «սահմանափակ սուվերենություն» ունեցող ձևականորեն անկախ պետություններին: *(Sti u, Berridge G.R. and James A. Diplomacy;Theory and practice; 2nd ed.-Leichester, 2000 P.57):*

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով են հանդես գալիս երկու տարբեր՝ «պետական» և «ժողովրդական» դիվանագիտությունները միևնույն պետության մեջ: Դա կախված է կոնկրետ պետության կառուցվածքից, նրա քաղաքական մշակույթի մակարդակից: Զարգացած դեմոկրատական համակարգ ունեցող երկրներում այդ երկու տարատեսակները զարգանում են զուգահեռ և, հաճախ, մտնում են համագործակցության մեջ: Ընդ որում, որքան սերտ է այդ համագործակցությունը, այնքան ակտիվ է տվյալ պետության արտաքին քաղաքականությունն ու արդյունավետությունը: Եվ հակառակը:(ՀՀ ԱԳՆ, ցավոք, հեռու է կանգնած հանրային դիվանագիտությունից): Իսկ երբ պետության արտգործնախարարությունն հրաժարվում է ժողովրդական դիվանագիտության հետ համագործոկցելուց ծագում է երկու կարծիք՝ ա) դիվանագիտական ծառայությունն ի վիճակի չէ կատարելու իր վրա դրված պարտականությունները, բ) դիվանագիտական ծառայությունն իր անկարողությունը փորձում է թաքցնել գաղտնապահության քողի տակ:

Լավագույնը այդ երկու դիվանագիտությունների սիմբիոզն է, որն անվանվում է «կատալիզատորային դիվանագիտություն»: *(Sti'u, «Современные международные отношения», Астеп Прес, Москва, 2014, стр. 646)*

Այստեղ բնականաբար հարց է ծագում: Արդյո՞ք «փափուկ ուժի» հայտնվելը, բացառում է «կոշտ ուժը» (hard power) որպես դիվանագիտական գործիք միջազգային հարաբերություններում: Ի՞նչ է կոնֆլիկտներն այլևս չե՞ն լուծվում ուժի՝ասել կուզի զենքի միջոցով: Չէ՞ որ հենց այսօր պատերազմական գործողություններ են ընթանում երկրագնդի տարբեր կետերում, արյուն է թափվում և զոհվում են մարդիկ:Անվանի քաղաքագետ Ցիգանկովն այս ենթատեքստում գտնում է, որ ուժային մեթոդները կարող են արդարացի լինել Ռուսաստանի համար, եթե դրանք պայմանավորված են «Ռուսաստանի պարտավորությունների հետ որպես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամի, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանք սպառնում են նրա ազգային անվտանգությանը, այդ թվում… ռուսական սահմանների երկայնքով»: *(Цыганков П.А. О месте России в мировой политике (ресурсный потенциал и возможности) // Материалы Международного научного конгресса «Глобалистика – 2009: пути выхода из глобального кризиса и модели нового мироустройства». МГУ им. М.В.Ломоносова. М.: МАКС Пресс, 2009. Т. 1. С. 369.):*

Անշուշտ, «կոշտ ուժը» մնում է միջազգային հարաբերությունների անքակտելի միջոց: Այն շարունակվում է հաճախ օգտագործվել պետությունների հարաբերություններում: Դրա հետ մեկտեղ ավելի ու ավելի հաճախ ականատես ենք լինում, այդ երկու ուժերի համադրմանը: Դրա ցայտուն օրինակը Ռուսաստանի և ԱՄՆ-ի դիվանագիտական գործընթացն է Սիրիայում, երբ ոչնչացվում են իսլամական ահաբեկչային ուժերը, իսկ Ժնևում ընթանում են բանակցություններ:

Վերջին տարիներին դիվանագիտական տեսության մեջ ի հայտ է եկել ուժի մի նոր տեսակ, որը կոչվում է «smart power», բառացի թարգմանությունը «խելացի ուժ»: Այսպիսով, դիվանագիտության մեջ մենք գործ ունենք երեք ուժի հետ՝ «փափուկ», «կոշտ» և «խելացի»: Ճկուն և բազմափորձ դիվանագիտություն ունեցող տերությունները հաճախ են համադրում «փափուկ» և «կոշտ» ուժիհնարավորությունները «խելացի ուժի» միջոցով՝ հասնելով ցանկալի արդյունքների: Օրինակ՝Հռոմը նվաճում էր օտար երկրներ, սակայն նրանց քաղաքացիներին հնարավորություն էր ընձեռում ստանալ հռոմեական հպատակություն: Վիկտորիանական Բրիտանիան նվաճած երկրների էլիտային հաղորդակից էր դարձնում իր մշակութին՝ արդյունքում Լոնդոնը հսկայական իմպերիան կառավորում էր տեղական ուժերով և շատ քիչ թվով անգլիական զորքեր էր օգտագործում այն պահելու համար:

Փաստված է, որ փոքր պետությունները ավելի ճիշտ են օգտվում «խելացի ուժի» քաղաքականությունից: Այսպես, օրինակ,Սինգապուրը բավականաչափ ռեսուրսներ ներդրեց իր պաշտպանական համակարգում: Սակայն նման քաղաքականությունը Սինգապուրը համադրեց ակտիվ դիվանագիտական քայլերի հետ, մտավ ԱՍԵԱՆ, հետո իր համալսարանները վերածեց տարածաշրջանի ոչկառավարական կազմակերպությունների ակտիվ ցանցային կենտրոնների: Արդյունքն՝ակներև է:Սաուդյան Արաբիայի ափերին ծվարված Քաթար փոքր թերակղզին Իրաքյան պատերազմի ժամանակ իր տարածքը տրամադրեց ամերիկյան զինված ուժերին և զուգահեռաբար ֆինանսավորեց տարածաշրջանի ամենամասսայական «Ալ Ջազաիրա» հեռուստատեսային ընկերությունը, որը խստորեն քննադատում է ամերիկյան քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիան նվազագույնի հասցրեց ռազմական ուժը, շեշտը դրեց ԱՄՆ-ի հետ ալյանս ստեղծելու վրա և դարձավ աշխարհի տնտեսական հսկաներից մեկը:Իսրայելը, որը տասնամյակներ շարունակ հենվել է կոշտ ուժի վրա իրեն շրջապատող արաբական աշխարհի հետ հարաբերվելիս, այսօր հմտորեն մաններում է «փափուկ ուժի» և «խելացի ուժերի» օգնությամբ և զարգացնում է տնտեսական հարաբերությունները Մոսկվայի հետ՝ դիմակայելու համար ԱՄՆ-ի և Եվրոպայի՝ իսրայելյան ուղղությամբ խստացվող քաղաքականությանը: Թվարկումը կարելի է շարունակել:

Հայկական կողմը ղարաբաղյան հիմնահարցի լուծումը պատկերացնում է խաղաղ ճանապարհով, բանակցային սեղանի շուրջը: Կնշանակի՝ ակտիվորեն պետք է օգտագործի «փափուկ ուժի» հնարավորությունները: (Հայկական դիվանագիտության վրիպումը կայանում է նրանում, որ անկախությունից առ այսօր այդ անկյունաքարային սկզբունքը որպես հայեցակարգ՝ կոնցեպտ ձևավորված չէ և ներկայացված չէ միջազգային հանրությանը): Այս դիրքորոշմանը հակադրվում է ադրբեջանական կողմը, որի ցայտուն ապացույցը ապրիլի սանձազերծած պատերազմական գործողություններն էին: Հայկական դիվանագիտության առանցքային խնդիրներից մեկը պետք է

լինի. բոլոր հնարավոր միջոցներով այս եղելության բացահայտումը միջազգային ատյաններում: Մինչդեռ մեր դիվանագիտական ծառայությունը հաճախ թերանում է այդ գերկարևոր հարցում՝ ցուցաբերելով աններելի կրավորական կեցվածք: Տողերիս հեղինակը, որը ՀՀ առաջին ներկայացուցիչն էր ԵԱՀԿ-ում կարող է վկայել, թե ինչպես1991-1993 հայ-ադրբեջանական մարտերի ամենաթեժ օրերին հայկական դիվանագիտությունը նախահարձակ լինելու փոխարեն, իր դեսպանին ցուցում էր տալիս բանակցային գործընթացներում «պահպանել հանգստություն և լռություն՝ խուսափել համար քաղաքական սադրանքներից և դիվանագիտական բարդություններից»: Ավելի թարմ օրինակներ: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո ՀՀ արտգործնախարարության անհասկանալի և անտրամաբանական պաուզայից, օգտվեց Բաքուն և ապրիլի 14-ին դիմեց ՄԱԿ և նրա Անվտանգության խորհուրդ՝ բողոքելով «հայկական կողմի սանձազերծած ագրեսիայի» կապակցությամբ: Մեր կարծիքով հայկակական դիվանագիտության սխալների շարքում առանձնանում է այն փաստը, որ ապրիլյան դեպքերի օրերին ՀՀ նախագահի հանձնարարականը ԱԳՆ-ին ԼՂՀ-ի հետ համագործակցության առումով համապատասխան պայմանագիր ստորագրելու վերաբերյալ մնաց ձայն բառբառո հանապատի:

Հանրային դիվանագիտության զինանոցում գոյություն ունեն մեկից ավելի միջոցներ, որոնց հմուտ կիրառումը մեծապես կնպաստեր մեր արտաքին և ներքին քաղաքականության խնդիրների լուծմանը: Վերցնենք «մաքոքային դիվանագիտությունը»՝«Shatl diplomacy», երբ x-պետությունը, գաղտի դիվանագիտական աշխատանք է տանում y և z պետությունների միջև կոնֆլիկտային կամ այլ կարգի խնդիրների լուծման ուղղությամբ: Ընդ որում, այստեղ պարտադիր չէ, որ դերակատարը-(ները) լինեն պրոֆեսիոնալ դիվանագետներ: Պատմությանը հայտնի է Հանրի Քիսինջերի «մաքոքային դիվանագիտության» շրջանակներում վարած բանակցությունները Իսրայելի և արաբական երկրների միջև: *(Տե՛ս, Berridge G.R. and James A. Dictionary of Diplomacy; Second Ediaton, Palgrave Macmilan, 2003 P.245):*Սակայն քչերին է հայտնի Անաստաս Միկոյանի բեռլինյան և կարիբյան ճգնաժամերի ժամանակ՝(համապատասխանաբար 1958-1961 թ.թ. և 1962թ.) նույն դիվանագիտական տրյուկի փայլուն օգտագործման փաստը: Ըստ մեր կարծիքի՝ հայկական դիվանագիտությունը կարող էր օգտագործել «մաքոքային դիվանագիտության» հնարքները՝ ի շահ իր արտաքին քաղաքականության: Հաջորդ, ոչ պակաս հետաքրքրիր մեթոդ է միջնորդական դիվանագիտությունը, որը հատկապես օգտաշատ է փոքր պետությունների համար: Միջնորդական դիվանագիտությունը, մեր խորին համոզմամբ կարող է հանդիսանալ հայկական դիվանագիտության հիմնաքարերից մեկը և վճռական նշանակություն ունենալ արտաքին քաղաքականության «կամ-կամ»-ի և «և-և»-ի անիմաստ բանավեճի դեպքում: Բացի ամեն ինչից, միջնորդական դիվանագիտության ճիշտ օգտագործումը կարող է հսկայական քաղաքական և տնտեսական դիվիդենտներ բերել Հայաստանին: Հանրային դիվանագիտության մյուս միջոցներից մեկն էլ այն է, որ բարեկամ երկրի օգնությամբ կանոնավորվում է երրորդ երկրի հետ գոյություն ունեցող լարված հարաբերությունները: Օրինակ՝ Պակիստանը չի ճանաչում Հայաստանը և դիվանագիտական հարաբերություններ չունի նրա հետ: Սակայն նույն Պակիստանը սերտ կապեր ունի Իրանի և Չինաստանի հետ, իսկ վերջիններս պատկանում են Հայաստանի բարեկամ երկրների թվին: Նման իրադրությունը հուշում է հայկական դիվանագիտությանը նպատակադրված աշխատանք տանել Կարաչիի հետ հարաբերությունները կանոնակարգելու համար: Հարկ է ուղիներ փնտրել Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները կանոնակարգելու համար ևս: (Ի դեպ՝ նշված երկու պետությունները խիստ բացասական դեր են խաղում իսլամական պետությունների շարքում հակահայկական քաղաքականություն վարելու ուղղությամբ): Դիվանագիտական հարաբերություններում պակաս կարևոր նշանակություն չունի երկրների միջև հակասությունների վրա խաղալը (Թուրքիա-Ադրբեջան, Թուրքիա-Իրան, Ադրբեջան-Իրան)ի օգուտ սեփական շահերի: Արդյո՞ք հայկական դիվանագիտությունն աշխատում է այդ ուղղությամբ: Հանրային դիվանագիտության զինանոցում գոյություն ունեն միջազգային իրավունքի միջոցներ ևս, որոնք հաճախ անտեսվում են ՀՀ և ԼՂՀհետաքրքրությունների գործում: ՄԱԿ-ի կողմից ճանաչված և ընդունված «Ստիպողական կամ պարտադրված առանձնացում» (Remedial cessation) բանաձևը օգտակար կարող էր լինել ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման գործում, ընդհուպ ԼՂՀ-ի դուրս գալը Ադրբեջանի կազմից, քանի որ այն նախատեսում է նման հանգուցալուծում, երբ էթնիկ խումբը կամ ազգային փոքրամասնությունը ենթարկվում է ոչնչացման վտանգի իր բնակված պետության կողմից: Այս ուղղությամբ, որքան մեզ է հայտնի, ՀՀ ԱԳՆ որևէ քայլ չի արել: Բացի այդ հայկական դիվանագիտությունը պետք է կանխարգելիչ ծրագիր ունենա՝ օգտվելու համար «Սպառնալիքի տակ պարտադրված որոշումից հրաժարվելու մասին» (Under duress) բանաձևից: Սա այն դեպքն է, երբ երկիրը մերժում է միջազգային կազմակերպության կամ ֆորումի այնպիսի բանձևի ընդունումը, որը հակասում է պետության շահերին և նրա ազգային անվտանգությանը: